ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ԿՈՇԻԿՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/6

ք. Երևան «03» 02 2020թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս կազմակերպության տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոտայքկոշ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն **Հ. Գևորգյանի**, որը գործում է «Կոտայքկոշ» ԲԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում որ

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **23 960 880 (քսաներեք միլիոն ինը հարյուր վաթսուն հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված

մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ, ք. Երևան, Բաղրամյան 78 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163007096304 ՀՎՀՀ 00000911 ---------- (ստորագրություն) Կ.Տ. Տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյան	«Կոտայքկոշ» ԲԲԸ, ք. Աբովյան, 5-րդ փողոց, շինություն 13 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570001965900100 ՀՎՀՀ 03506316 ---------- (ստորագրություն) Կ.Տ. Տնօրեն Հ. Գևորգյան

Հավելված N 1
« 03 » 02 2020թ. կնքված
«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը***
18111300/1	Կոստյում աշխատանքային ամառային	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Աշխատանքային արտահագուստը պետք է կարվի բամբակապոլիեսթերային ջրակայուն կտորից: Կտորի բաղադրությունը 80% բամբակ, 20% պոլիեսթեր, մակերեսային խտությունը – 255 – 260 գ/մ²: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի պետք է կազմի 445 ± 5, ըստ միջնաթելի 210 ± 5, կտորի ջրամեկուսացման ելակետային տվյալը պետք է կազմի ոչ պակաս 2,000ՊԱ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ոչ պակաս 1,800ՊԱ: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը 60°C ջերմաստիճանով թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել -3.5%, ըստ միջնաթելի ± 2.5%, կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 1000Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 600 Ն: Արտահագուստը բաղկացած է երկարացված բաճկոնից և տաբատից: Կտորի հիմնական գույնը սև կամ մուգ կապույտ գույնի: Ուսագոտուց մինչև դաստակը 10սմ լայնքով կարմիր երիզ պետք է կարված լինի: Բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ տեսականու չափսի մասին նշումով, թևքերը՝ երկարաթև, դաստակի հատվածում մանժետ 5,5 սմ, որը կոճկվում է կոճակներով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով, որի հանգույցի խաչաձև ամրությունը 600 Н, իսկ վերին սահմանափակիչների ամրությունը 200 Н: Բաճկոնի կողային հատվածում տեղադրված է 2 ներկարված գրպան, որոնք թեքված են դեպի ներս, կենտրոնական փակվող շղթայի նկատմամբ 55° թեքությամբ, իսկ կրծքային ձախակողմյան հատվածում մեկ վրադիր ծավալային գրպան: Բաճկոնի կողային ներսի գրպանների մուտքի ձևվածքը շեղ է 2.5 – 3 սմ	լրակազմ	10560	4498560	426	Բաղրամյան 78	426	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.

				լայնությամբ մանժետով: Գրպանները մշակված են սև գույնի բամբակյա աստառից, որի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ²: Կրծքային գրպանը փակվում է կպչունային փականներով: Կրծքային գրպանների արտաքին մասում ներսի կողմից ուղղահայաց կարմիր երիզ պետք է լինի: Կրծքային գրպանից վերև ընկած հատվածում պետք է կարված լինի հորիզոնական 5սմ-ոց լայնքով, բաց մոխրագույն A որակի լուսարձնդրադարձնող ժապավեն, որին համապատասխան թիկունքի ամբողջ երկայնքով և թևքերում նույն ժապավենից պետք է լինի: լուսարձնդրադարձնող ժապավենի լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м²) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м²) ցուցանիշից: Բաճկոնի գոտկատեղում մշակված է գոտի, որի մեջ տեղադրված է 5-6 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված բաճկոնի չափսն կարգավորելու համար: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության բազմագույն լոգոն: Տաբատը ուղիղ ձևվածքի, առջևից 2 ներկարված կողային գրպաններով, որոնք մշակված են սև գույնի բամբակյա աստառից: Աստառի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ²: Տաբատի ներքևի ծնկային հատվածում տեղադրված են 2 վրադիր ծավալային, ձևավոր գրպաններ՝ կափույրներով: Վրադիր գրպանների բարձրությունը ոչ պակաս 21 սմ, լայնությունը՝ ոչ պակաս 18 սմ: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, որոնց լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м²) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м²) ցուցանիշից: Արտահագուստի բոլոր զարդակարերը պետք է լինեն գույգ կարով՝ մշակված գույգ կարի մեքենայով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ վշակված հատուկ ամրակարի մեքենայով: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային							

				տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1 կոմպլեկտ, տոպրակները պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը:							
2	18211500/1	Բաճկոն ձմեռային	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Ձմեռային բաճկոնը պետք է կարվի պոլիեսթերա-բամբակային ջրակայուն կտորից: Կտորի բաղադրությունը 40% բամբակ, 60% պոլիեսթեր, մակերեսային խտությունը - 245գ/մ²: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի պետք է կազմի 430± 5, ըստ միջնաթելի 175 ± 5, 50 x 200մմ չափսի կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 2000Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 500 Ն, կտորի ջրամեկուսացման ելակետային տվյալը պետք է կազմի ոչ պակաս 2,000ՊԱ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ոչ պակաս 1,800ՊԱ: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել -3.5%, ըստ միջնաթելի ± 2.5%: գունային համադրությունը՝ մուգ կապույտ կամ սև գույնը համադրված կարմիր հետ: Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով, երկարությունը գոտկատեղից 20 սմ ներքև, կանգուն օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Բաճկոնի առաջամասում և ետևամասում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 300 գ/մ² խտությամբ սինթեպոն որը մգդակված է մուգ գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ, իսկ թևերի հատվածում 200 գ/մ² խտությամբ սինթեպոն որը ևս մգդակված է մուգ գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ: Մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 60- 65 գ/մ²: Թևքերը՝ ներկարված են, երկկարանի, դաստակի հատվածում 5,5 սմ լայնությամբ ռեզինե մանժետով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով, որի հանգույցի խաչաձև ամրությունը 600 Հ, իսկ վերին սահմանափակիչների ամրությունը 200 Հ: Բաճկոնի ներքևի կողային հատվածում տեղադրված է 2 վրադիր ծավալային գրպան, և 2 վրադիր ծավալային գրպան կափույրներով՝ կրծքային հատվածում: Բաճկոնի կողային վրադիր գրպանների մուտքի ձևվածքը շեղ է 2.5 – 3 սմ լայնությամբ մանժետով: Բաճկոնի կրծքավանդակի հատվածի վրադիր գրպանները մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրի վրա տեղադրված է պոլիպրոպիլենե փոկ՝ բացելուց գրպանն չաղտոտելու համար: Բաճկոնի կրծքավանդակի ողջ շրջագծով, ինչպես նաև թևերին	հատ	13440	1008000	75	Բաղրամյան 78	75	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.

			տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, որոնց լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м²) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м²) ցուցանիշից: Բաճկոնի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ վշակված հատուկ ամրակարի մեքենայով: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության բազմագույն լոգոն: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1 հատ, տոպրակները պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափը:							
18211500/2	Բաճկոն ձմեռային կանացի	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Կանացի ձմեռային բաճկոնը պետք է կարվի 100 % պոլիեսթերա բաղադրությամբ ջրակայուն կտորից: Գունային համադրությունը՝ մուգ կապույտ կամ սև գույնը համադրված կարմիր հետ: Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով, երկարությունը գոտկատեղից 20 սմ ներքև, կանգուն օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Բաճկոնի առաջամասում և ետնամասում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 300 գ/մ² խտությամբ սինթեպոն որը մգդակված է մուգ գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ, իսկ թևերի հատվածում 200 գ/մ² խտությամբ սինթեպոն որը ևս մգդակված է մուգ գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ: մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 60- 65 գ/մ²: Թևքերը՝ ներկարված են, երկկարանի, դաստակի հատվածում 5,5 սմ լայնությամբ ռեզինե մանժետով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով, որի հանգույցի խաչաձև ամրությունը 600 Н, իսկ վերին սահմանափակիչների ամրությունը 200 Н: Բաճկոնի ներքևի կողային հատվածում տեղադրված է 2 վրադիր ծավալային գրպան, և 1 վրադիր ծավալային գրպան կափույրներով՝ կրծքային հատվածում: Բաճկոնի կողային վրադիր գրպանների մուտքի ձևվածքը շեղ է 2.5 – 3 սմ լայնությամբ մանժետով: Բաճկոնի կրծքավանդակի հատվածի վրադիր գրպանը մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրի	հատ	16200	1004400	62	Բաղրամյան 78	62	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.

				վրա տեղադրված է պոլիպրոպիլենե փոկ՝ բացելուց գրպանն չաղտոտելու համար: Բաճկոնի կողային գրպաններից վերև և ներքը, ինչպես նաև թևերին տեղադրված են կրկնակի 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, որոնց լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м²) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м²) ցուցանիշից: Բաճկոնի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ վշակված հատուկ ամրակարի մեքենայով: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության բազմագույն լոգոն: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի՛ մեջ 1 հատ, տոպրակները պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափը:							
18111310/1	Ձմեռային բանվորական կոստյում	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Ձմեռային բաճկոնը պետք է կարվի պոլիեսթերաբամբակային ջրակայուն կտորից: Կտորի բաղադրությունը 40% բամբակ, 60% պոլիեսթեր, մակերեսային խտությունը - 245գ/մ²: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի պետք է կազմի 430± 5, ըստ միջնաթելի 175 ± 5, 50 x 200մմ չափսի կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 2000Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 500 Ն, կտորի ջրամեկուսացման ելակետային տվյալը պետք է կազմի ոչ պակաս 2,000ՊԱ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ոչ պակաս 1,800ՊԱ: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել -3.5%, ըստ միջնաթելի ± 2.5%: գունային համադրությունը՝ մուգ կապույտ կամ սև գույնը համադրված կարմիր հետ: Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով, երկարությունը գոտկատեղից 20 սմ ներքև, կանգուն օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Բաճկոնի առաջամասում և ետնամասում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 300 գ/մ² խտությամբ սինթեպոն որը մգդակված է մուգ գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ, իսկ թևերի հատվածում 200 գ/մ² խտությամբ սինթեպոն որը ևս մգդակված է մուգ գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ: մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է	լրակազմ	20880	6577200	315	Բաղրամյան 78	315	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.

				կազմի ոչ պակաս 60- 65 գ/մ²: Թևքերը՝ ներկարված են, երկկարանի, դաստակի հատվածում 5,5 սմ լայնությամբ ռեզինե մանժետով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով, որի հանգույցի խաչաձև ամրությունը 600 Н, իսկ վերին սահմանափակիչների ամրությունը 200 Н: Բաճկոնի ներքևի կողային հատվածում տեղադրված է 2 վրադիր ծավալային գրպան, և 2 վրադիր ծավալային գրպան կափույրներով՝ կրծքային հատվածում: Բաճկոնի կողային վրադիր գրպանների մուտքի ձևվածքը շեղ է 2.5 – 3 սմ լայնությամբ մանժետով: Բաճկոնի կրծքավանդակի հատվածի վրադիր գրպանները մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրի վրա տեղադրված է պոլիպրոպիլենե փոկ՝ բացելուց գրպանն չաղտոտելու համար: Բաճկոնի կրծքավանդակի ողջ շրջագծով, ինչպես նաև թևերին տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, որոնց լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м²) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м²) ցուցանիշից: Բաճկոնի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ վշակված հատուկ ամրակարի մեքենայով: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության բազմագույն լոգոն: Զմեռային տաբատը պետք է կարվի պոլիեսթերաբամբակային ջրակայուն կտորից: Կտորի բաղադրությունը 40% բամբակ, 60% պոլիեսթեր, մակերեսային խտությունը - 245գ/մ²: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի պետք է կազմի 430± 5, ըստ միջնաթելի 175 ± 5, 50 x 200մմ չափսի կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 2000Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 500 Ն, կտորի ջրամեկուսացման ելակետային տվյալը պետք է կազմի ոչ պակաս 2,000ՊԱ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ոչ պակաս 1,800ՊԱ: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել -3.5%, ըստ միջնաթելի ± 2.5%: Գունային համադրությունը՝ մուգ կապույտ կամ սև գույնը համադրված կարմիր հետ: Տաբատը ուղիղ ձևվածքի, առջևից 2 կողային վրադիր ծավալային գրպաններով: կողային վրադիր գրպանների							

				մուտքի ձևվածքը շեղ է 2.5 – 3 սմ լայնությամբ մանժետով: Վրադիր գրպանների բարձրությունը ոչ պակաս 25 սմ, լայնությունը՝ ոչ պակաս 18 սմ: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, որոնց լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м²) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м²) ցուցանիշից: Տաբատի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով, բոլոր վրադիր գրպանների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ մշակված հատուկ ամրակարի մեքենայով: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1 լրակազմ, տոպրակները պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը:							
5	18811210/1	Կոշիկ աշխատանքային	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Կոշիկ աշխատանքային՝ նախատեսված աշխատակիցների անվտանգության ապահովման համար: Կոշիկը պետք է համապատասխանի EN 20345 ստնդարտի պահանջներին՝ S3 պաշտպանողականության աստիճանով: Կոշիկը բաղկացած է առաջամասից, ճտքերի ստորին հատվածից, ճտքերի վերին հատվածից, լեզվակից, տակացուից: Կոշիկի առաջամասը, ճտքերի ստորին հատվածները և լեզվակը պետք է կարված լինեն 1.9 – 2.1 մմ հաստությամբ սև գույնի բնական նակատե կաշվից: Ճտքերի վերին մասը պետք է կարված լինի բաց մոխրագույն կաշվից կամ բարձրորակ բաց մոխրագույն կաշվե փոխարինիչից՝ բաղկացած երկու հատվածից, որից վերին հատվածի բարձրությունը կազմում է 3 սմ, իսկ ստորին U –աձև հատվածի մեջտեղի մասի բարձրությունը 6.5սմ: Բաց մոխրագույն կաշվե հատվածի ներսի կողմից պետք է տեղադրված լինի սպունգե ներդիր: Կոշիկի լեզվակը կողքերից մշակվում է լրացուցիչ փակ կափույրներով՝ նախատեսված կեղտի ներթափանցումն կանխարգելելու համար: Կոշիկի ընդհանուր բարձրությունը պետք է կազմի 15 սմ, իսկ ճտքի	զույգ	11160	4240800	380	Բաղրամյան 78	380	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.

				բարձրությունն ետնամասի հատվածից պետք է կազմի 10.5 սմ: Ճտքերին առկա են 5 շարք մետաղական արագաքուղ կեռիկներ, կապումը՝ կոշկաքուղերով: Կոշիկի տակացուն պետք է պատրաստված լինի երկշերտ պոլիուրետանից՝ ընդ որում տակացուի վերին շերտն պետք է լինի մոխրագույն գույնի, իսկ ստորին շերտն սև գույնի Կոշիկի տակացուի միացման եղանակը՝ պոլիուրետանի ուղիղ սրսկում - PU Injection method, որն դարձնում է տակացուն զգատովկայի հետ մեկ ամբողջություն: Կոշիկը պետք է ունենա մետաղական քթամաս՝ նախատեսված ոտքի մատերը մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածներից պաշտպանելու համար, և մետաղական ճկվող ներդիր՝ նախատեսված ոտքի թաթերը սուր, կտրող իրերից պաշտպանելու համար: Կոշիկի ներսի հատվածում պետք է տեղադրված լինի ծակոտկեն գործվածք: Կոշիկները պետք է արտադրված լինեն 2019 թ-ից ոչ ուշ:							
6	18811240/1	Ռետինե երկարա ճիտք կոշիկներ	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Երկարաճիտք կոշիկները պատրաստված են կաղապարման եղանակով, նախատեսված են ոտքերը ջրից և ընդանուր արտադրական աղտոտվածությունից պաշտպանելու համար: Կոշիկի բարձրությունը 39-40 սմ:	զույգ	4908	1472400	300	Բաղրամյան 78	300	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.
7	35811170/1	Բրեզենտե կոստյում	«Կոտայքկոշ» ԲԲԸ	ԳՈՍ 12.4.250-2013, ТР ТС 019/2011: Արտահագուստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Կկոստյումը պետք է պատրաստված լինի սպիլոկ տեսակի կաշվից և բրեզենտից. Բաճկոնի առաջամասը, ետնամասի կոկետկան, թևքերի դիմային հատվածը և ոտքերի դիմային հատվածը պետք է մշակված լինեն 0.9-1.1 մմ հաստությամբ սպիլոկ կաշվից, իսկ մեջքամասը, թևքերի ետևի հատվածը, տաբատի ետևի հատվածը պետք է մշակված լինեն 520 գ/մ2 խտությամբ հրակայուն բրեզենտից: Կոստյումը պետք է լինի պաշտպանողականության երկրորդ աստիճանի, իսկ բրեզենտի նյութը պետք է հաստատված լինի արտադրող երկրի գիտությունների ակադեմիայի քիմիայի և լուծույթների ԳՀԻ կողմից:	լրակազմ	40440	3639600	90	Բաղրամյան 78	90	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.
8	35111340/1	Ազդանշանային ժիլետ	«Կոտայքկոշ» ԲԲԸ	ГОСТ Р 12.4.281-2014, լուսանդրադարձնող ժիլետը դեղին (լիմոնե) գույնի է, կտորի բաղադրությունը 100% պոլիէֆիր, կոճկումն իրականցվում է առաջամասի եզրին հորիզոնական կարված կրկնակի 8 սմ երկարությամբ կպչուններով, որոնք հնարավորություն են տալիս չափսի կարգավորման: ժիլետն ունի առաջամասում երկու վրադիր ուղղանկյուն գրպաններ:	հատ	1896	511920	270	Բաղրամյան 78	270	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝

				Գրպանների վերին հատվածում տեղադրված են հորիզոնական, 5 սմ լայնությամբ կրկնակի լուսանդրադարձնող ժապավեններ: Ժիլետի առաջամասում և ետնամասում՝ ուսերից սկսած մինչ հորիզոնական ժապավենների վերին հատվածը ևս կարված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ:							29.02.2020թ.
18111500/1	Կոստյում յուղակայուն	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Յուղակայուն կոստյումը պետք է կարվի պոլիեսթերաբամբակային յուղաջրակայուն կտորից: Կտորի բաղադրությունը 40% բամբակ, 60% պոլիեսթեր, մակերեսային խտությունը - 245գ/մ²: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի պետք է կազմի 430± 5, ըստ միջնաթելի 175 ± 5, 50 x 200մմ չափսի կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 2000Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 500 Ն, **կտորի յուղակայունությունը սկզբանական վիճակում պետք է կազմի 5 բալ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո յուղակայունության ցուցանիշը չպետք է փոխվի**: Գունային համադրությունը՝ մուգ կապույտ կամ սև գույնը համադրված կարմիր հետ: Արտահագուստը բաղկացած է երկարացված բաճկոնից և տաբատից: կտորի հիմնական գույնը սև կամ մուգ կապույտ գույնի: Ուսագոտուց մինչև դաստակը 10սմ լայնքով կարմիր երիզ պետք է կարված լինի: Բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ տեսականու չափսի մասին նշումով, թևքերը՝ երկարաթև, դաստակի հատվածում 5,5 սմ լայնությամբ ռետինե մանժետ: Բաճկոնը կոճկվում է կոճակներով, կոճկելուց կոճակները արտաքինից չեն երևում: Բաճկոնի կողային հատվածում տեղադրված է 2 ներկարված գրպան, որոնք թեքված են դեպի ներս, կենտրոնական փակվող շղթայի նկատմամբ 55⁰ թեքությամբ, իսկ կրծքային ձախակողմյան հատվածում մեկ վրադիր ծավալային գրպան: Բաճկոնի կողային ներսի գրպանների մուտքի ձևվածքը շեղ է 2.5 – 3 սմ լայնությամբ մանժետով: Գրպանները մշակված են սև գույնի բամբակյա աստառից, որի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ²: Կրծքային գրպանը փակվում է կպչունային փականներով: Կրծքային գրպանների արտաքին մասում ներսի կողմից ուղղահայաց կարմիր երիզ պետք է լինի: Կրծքային գրպանից վերև ընկած հատվածում պետք է կարված լինի հորիզոնական 5սմ-ոց լայնքով, բաց մոխրագույն A որակի լուսարձնդրադարձնող ժապավեն, որին համապատասխան թիկունքի ամբողջ երկայնքով և թևքերում նույն ժապավենից պետք է լինի:	Լրակազմ	17760	710400	40	Բաղրամյան 78	40	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.

				լուսարձնդրադարձնող ժապավենի լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м²) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м²) ցուցանիշից: Բաճկոնի գոտկատեղում մշակված է գոտի, որի մեջ տեղադրված է 5-6 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված բաճկոնի չափսն կարգավոնրելու համար: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության բազմագույն լոգոն: Տաբատը ուղիղ ձևվածքի, առջևից 2 ներկարված կողային գրպաններով, որոնք մշակված են սև գույնի բամբակյա աստառից: Աստառի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ2: Տաբատի ներքևի ծնկային հատվածում տեղադրված են 2 վրադիր ծավալային, ձևավոր գրպաններ՝ կափույրներով: Վրադիր գրպանների բարձրությունը ոչ պակաս 21 սմ, լայնությունը՝ ոչ պակաս 18 սմ: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավոնրելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, որոնց լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м²) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м²) ցուցանիշից: Արտահագուստի բոլոր զարդակարերը պետք է լինեն գույգ կարով՝ մշակված գույգ կարի մեքենայով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ վշակված հատուկ ամրակարի մեքենայով: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1 կոմպլեկտ, տոպրակները պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը:							
18311190/1	Խալաթ աշխատանքային	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Կտորի բաղադրությունը 47% բամբակ և 53% պոլիէստեր, մակերեսային խտությունը՝ 215 գր/մ2: Կտորը ջրադիմացկուն: Գծային չափսերի փոփոխությունը (նստվածքը) 10 /տաս/ անգամյա լվանալուց հետո չպետք է գերազանցի 2-3%: Հիմքի պատռման բեռնվածությունը (разрывная нагрузка основы) ոչ պակաս 1,500 Н, ջրակայունությունը ոչ	հատ	7440	297600	40	Բաղրամյան 78	40	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև՝ 29.02.2020թ.

				պակաս քան 180 ջրային կաթիլ/մմ: Խալաթի գույնը սև կամ մուգ կապույտ կարմիրի համադրությամբ: Խալաթը պետք է ունենա երեք վրադիր ծավալային գրպան, որոնցից երկուսը կողային հատվածներում, իսկ մեկը՝ կրծքավանդակին՝ կափույրով: կրծքավանդակի շրջազծով և թևքերին 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ: Խալաթի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության բազմագույն լոգոն: Խալաթը կրում է 9 սև, 22մմ տրամագծով կոճակներ, որից 7-ը առաջնային, 2-ը թևերի բազկակալների վրա: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 5 հատ, տոպրակները պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափը:								
Ընդամենը							23 960 880					

ոլոր ապրանքները պետք է ունենան համապատասխան պիտակավորում և փաթեթավորում: Փաթեթավորման պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, ակը, չափերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը: Մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 30-ից մինչև 17.00-ն մատակարների միջոցներով և հաշվին: Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:

Բոլոր ապրանքները պետք է մատակարարվեն պատվիրատուի կողմից նշված համապատասխան անհատական չափսերով:

ատակարարվող յուրաքանչյուր անուն ապրանքի / արտադրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը ստուգելու նպատակով, Վաճառողը պարտավոր է, իր ցների հաշվին, ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբորատոր հետազոտական կենտրոններից մեկում մատակարարվող ապրանքը / արտադրանքը ենթարկել ոատոր փորձարկման և փորձարկման եզրակացությունը ներկայացնել Գնորդին:

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի կարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ոված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ, ք. Երևան, Բաղրամյան 78 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163007096304 ՀՎՀՀ 00000911 ---------- (ստորագրություն) Կ.Տ. Տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյան	«Կոտայքկոշ» ԲԲԸ, ք. Աբովյան, 5-րդ փողոց, շինություն 13 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570001965900100 ՀՎՀՀ 03506316 ---------- (ստորագրություն) Կ.Տ. Տնօրեն Հ. Գևորգյան

Հավելված N 2
« 03 » 02 2020թ. կնքված
«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

...վերով ...ատեսվ ...ած ...իաբա ...ժնի ...մարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18111300/1	Կոստյում աշխատանքային ամառային	4498560	4498560	4498560	4498560	4498560	4498560	4498560	4498560	4498560	4498560	4498560	4498560	4498560
2	18211500/1	Բաճկոն ձմեռային	1008000	1008000	1008000	1008000	1008000	1008000	1008000	1008000	1008000	1008000	1008000	1008000	1008000
3	18211500/2	Բաճկոն ձմեռային կանացի	1004400	1004400	1004400	1004400	1004400	1004400	1004400	1004400	1004400	1004400	1004400	1004400	1004400
4	18111310/1	Ձմեռային բանվորական կոստյում	6577200	6577200	6577200	6577200	6577200	6577200	6577200	6577200	6577200	6577200	6577200	6577200	6577200
5	18811210/1	Կոշիկ աշխատանքային	4240800	4240800	4240800	4240800	4240800	4240800	4240800	4240800	4240800	4240800	4240800	4240800	4240800
6	18811240/1	Ռետինե երկարաճիտք կոշիկներ	1472400	1472400	1472400	1472400	1472400	1472400	1472400	1472400	1472400	1472400	1472400	1472400	1472400
7	35811170/1	Բրեզենտե կոստյում	3639600	3639600	3639600	3639600	3639600	3639600	3639600	3639600	3639600	3639600	3639600	3639600	3639600
8	35111340/1	Ազդանշանային ժիլետ	511920	511920	511920	511920	511920	511920	511920	511920	511920	511920	511920	511920	511920

9	18111500/1	Կոստյում յուղակայուն	710400	710400	710400	710400	710400	710400	710400	710400	710400	710400	710400	710400	710400
10	18311190/1	Խալաթ աշխատան քային	297600	297600	297600	297600	297600	297600	297600	297600	297600	297600	297600	297600	297600
Ընդամենը			23960880	23960880	23960880	23960880	23960880	23960880	23960880	23960880	23960880	23960880	23960880	23960880	23960880

ճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ,
ք. Երևան, Բաղրամյան 78
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007096304
ՀՎՀՀ 00000911

(ստորագրություն)
Կ.Տ.

Տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյան

ՎԱՃԱՌՈՂ

«Կոտայքկոշ» ԲԲԸ,
ք. Աբովյան, 5-րդ փողոց, շինություն 13
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001965900100
ՀՎՀՀ 03506316

(ստորագրություն)
Կ.Տ.

Տնօրեն Հ. Գևորգյան